op.2

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԳՀԱՊՁԲ-21/4-ԴԵՂՈՐԱՅՔ/1

N 11/30/-2021

ք. Երևան «21» 04 2021 թ.

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը, ի դեմս ծառայության տնօրենի տեղակալ Ա. Հակոբյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Մացակյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

2.1.8 Ձննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **1 155 449 (մեկ միլիոն մեկ հարյուր հիսունհինգ հազար չորս հարյուր քառասունինը)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ

էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով

կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ԱԱԾ	
ք. Երևան, Նալբանդյան 104	**«ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ**
ՀՀ Ֆին. Նախ. աշխատակազմի	**ք. Երևան, Շիրակի 1/68**
գործառնական վարչություն	**«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ**
Հ/հ 900011301075	**Հ/հ 1660005021450100**
ՀՎՀՀ 01507079	**ՀՎՀՀ 02606482**
Տնօրենի տեղակալ՝	**Տնօրեն՝**
Ա. Հակոբյան	**Մ. Մացակյան**

Հավելված N 1
« 21 » 07 2021թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԳՀԱՊՁԲ-21/4-ԴԵՂՈՐԱՅՔ/1

11/301-2021

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի												
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը **	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման հասցեն	մատակարարման ենթակա քանակը	ժամկետը*** 31.08.2021թ	ժամկետը*** 30.09.2021թ	ժամկետը*** 15.12.2021թ
3	33651131/3	Սուլֆամեթօքսազոլ + տրիմեթոպրիմ J01EE01, J01EE02, J01EE05, J01EE07	Բակտրիմ ֆորտե, Ֆ. Հոֆման-Լա ՌոշՍՊԸ	Դեղահատեր թաղանթապատ, (800մգ+160մգ) : Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը): Ֆիրմայի նշումով:	հատ	422	105500	250	Ք. Երևան, Ամիրյան 23	250	250	0	0
4	33611160/3	Մետոկլոպրամիդ A03FA01	Մետոկլոպրամիդ, "Բորիսովյան բուժպատրաստուկն երի գործարան" ԲԲԸ	Լուծույթ ներարկման, 5մգ/մլ, 2մլ , ամպուլ: Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը): Ֆիրմայի նշումով:	հատ	59.4	5940	100	Ք. Երևան, Ամիրյան 23	100	0	50	50
11	33621420/3	Ատորվաստատին C10AA05	Ատորիս, ԿՌԿԱ դ.դ	Դեղահատեր թաղանթապատ 10մգ :Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը): Ֆիրմայի նշումով:	հատ	29.97	72827.1	2430	Ք. Երևան, Ամիրյան 23	2430	750	750	930
16	33631380/4	Տոլպերիզոնի հիդրոքլորիդ M03BX04	Միդոկալմ, Գեդեոն ՌիխտերԲԲԸ	Դեղահատեր թաղանթապատ, 150մգ : Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը): Ֆիրմայի նշումով:	հատ	112.3	134760	1200	Ք. Երևան, Ամիրյան 23	1200	300	450	450
17	33691189/2	Բետահիստին (բետահիստինի դիհիդրոքլորիդ) N07CA01	Պոլվերտիկ, Մեդանա Ֆարմա ԲԸ	Դեղահատեր, 24մգ : Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը): Ֆիրմայի նշումով:	հատ	77	161700	2100	Ք. Երևան, Ամիրյան 23	2100	600	600	900
18	33691190/3	Թիոկտաթթու	Թիոկտացիդ 600 Տ,	Լուծույթ ներարկման , 25մգ/մլ,	հատ	2402	60050	25	Ք.	25	15	0	10

		(ալֆա-լիպոյաթթու) A16AX01, A05BA	ՄԵԴԱ Ֆարմա ԳՄԲՀ & Քո. ԿԳ	24մլ ամպուլ : Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը): Ֆիրմայի նշումով:					Երևան, Ամիրյան 23				
19	33621470/3	Մօքսոնիդին C02AC05	Ֆիզիոտենզ, Աբբոտ Լաբորատորի եսԳՄԲՀ	Դեղահատեր թաղանթապատ 0,4մգ : Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը): Ֆիրմայի նշումով:	հատ	263.3	147448	560	Ք. Երևան, Ամիրյան 23	560	140	210	210
28	33621100/4	Հեպարին նատրիում B01AB01, C05BA03, S01XA14	Լիոտոն 1000, Ա. Մենարինի Մանուֆակչըրինգ Լոջիստիկս և Սերվիսիս Ս.ռ.լ	Դոնդող արտաքին կիրառման, 1000ՄՄ/գ, 50գ պարկուճ: Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը): Ֆիրմայի նշումով:	հատ	3844	69192	18	Ք. Երևան, Ամիրյան 23	18	6	6	6
32	33651127/3	Դոքսիցիկլին A01AB22, J01AA02	Դոքսիցիկլին, "Բորիսովյան բուժպատրաստուկն երի գործարան" ԲԲԸ	Դեղապատիճներ, 100մգ : Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը): Ֆիրմայի նշումով:	հատ	21.4	3210	150	Ք. Երևան, Ամիրյան 23	150	150	0	0
33	33621270/3	Մենթոլի լուծույթ մենթիլ իզովալերաթթվում C01EX	Վալիդոլ, ՄինսկինտերկապսՈՒ.Ձ.	Դեղապատիճներ, 100մգ : Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը): Ֆիրմայի նշումով:	հատ	21.5	10750	500	Ք. Երևան, Ամիրյան 23	500	500	0	0
37	33651145/2	Դեքսամեթազոն, նեոմիցին (նեոմիցինի սուլֆատ), պոլիմիքսին B (պոլիմիքսին B-ի սուլֆատ) S01CA01	Մաքսիտրոլ, Ս.Ա. Ալկոն-ԿուվրորՆ.Վ.	Ակնակաթիլներ (դեղակախույթ) 1մգ/մլ+3500ՄՄ/մլ+ 6000ՄՄ/մլ, 5մլ սրվակ: Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը): Ֆիրմայի նշումով:	հատ	2150	21500	10	Ք. Երևան, Ամիրյան 23	10	5	0	5
39	33691216/5	Էթիլմեթիլհիդրոքսիպիրիդինի սուկցինատ N07XX	Մեքսիպամ, Լիկվոր ՓԲԸ	Լուծույթ մ/մ և ն/ե ներարկման, 50մգ/մլ, 2մլ ամպուլ: Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը): Ֆիրմայի նշումով:	հատ	314	62800	200	Ք. Երևան, Ամիրյան 23	200	100	0	100
43	33671124/2	Տոբրամիցին, դեքսամեթազոն S01CA01	Տոբրադեքս, Ս.Ա. Ալկոն-Կուվրոր Ն.Վ.	Ակնաքսուք 3մգ/գ+1մգ/գ, 3.5գ պարկուճ: Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը): Ֆիրմայի նշումով:	հատ	1870	18700	10	Ք. Երևան, Ամիրյան 23	10	10	0	0

44	33671124/1	Տոբրամիցին, դեքսամեթազոն S01CA01	Տոբրադեքս, Ս.Ա. Ալկոն-Կուվրոր Ն.Վ.	Ակնակաթիլներ (դեղակախույթ) 3մգ/մլ+1մգ/մլ, 5մլ պլաստիկե սրվակ:Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը): Ֆիրմայի նշումով:	հատ	1787.19	17871.9	10	Ք. Երևան, Ամիրյան 23	10	10	0	0
50	33691213/2	Լիոֆիլացված կենդանի կաթնաթթվային մանրէներ (լակտոբացիլուս ացիդոֆիլուս, բիֆիդոբակտերիում անիմալիս) - A07FA01	Լինեքս ֆորտե, Լեկ Ֆարմասյուտիկալսդ.դ.	Դեղապատիճներ,2x10^9: Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը): Ֆիրմայի նշումով:	հատ	186	104160	560	Ք. Երևան, Ամիրյան 23	560	280	0	280
62	33621320/3	Կատվախոտ դեղատու, պատրինջ դեղատու, անանուխ պղպեղային HN05CM	Պերսեն Նայթ, Լեկ Ֆարմասյուտիկալսդ.դ.	Դեղապատիճներ, 87,5մգ+17,5մգ+17,5մգ: Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը): Ֆիրմայի նշումով:	հատ	142	159040	1120	Ք. Երևան, Ամիրյան 23	1120	560	0	560

Ծանոթություն

1. Դեղի պիտանիության ժամկետները դեղը գնորդին հանձնելու պահին պետք է լինեն հետևյալը՝

ա. 2,5 տարի և ավելի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնելու պահին պետք է ունենան առնվազն 24 ամիս մնացորդային պիտանիության ժամկետ,

բ. մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնելու պահին պետք է ունենան առնվազն 12 ամիս մնացորդային պիտանիության ժամկետ,

2. Դեղերի տեխնիկական բնութագրերը կազմվել են 02.05.2013թ. N502-Ն կառավարության որոշման համաձայն:

3. Դեղերը մատակարարելիս՝ ներկայացվում է մատակարարված ապրանքատեսակների խմբաքանակի որակի սերտիֆիկատ և ՀՀ կառավարության 02.05.2013թ. N502-Ն որոշմամբ նախատեսված փաստաթղթերը/որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետի 8-րդ ենթակետ/:

4. Ապահովել դեղերի տեղափոխման և պահպանման պայմանները «Դեղերի փոխադրման, պահեստավորման և պահպանման կարգը սահմանելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի 09.09.2010թ. N17-Ն հրամանով սահմանված պահանջներին համապատասխան:

5. Դեղորայքը պետք է գրանցված լինի Հայաստանի Հանրապետությունում:

6. ՀՀ «Դեղերի մասին» օրենքի համաձայն՝ ՀՀ-ում դեղերի մեծածախ իրացում կարող է կատարվել միայն մեծածախ իրացման լիցենզիայի առկայության դեպքում իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի՝ մատակարարների կողմից անկախ կազմակերպության կարգավիճակից /պետական, թե մասնավոր/:

Ապրանքի տեղափոխումը ավտոտրանսպորտով, բեռնաթափումը՝ բանվորական ուժով կատարվում է մատակարարի կողմից: Ապրանքը մատակարարվում է՝ ք. Երևան, Ամիրյան 23 հասցեով:

Տեխնիկական բնութագրերով բոլոր հղումների դեպքում Գնումների մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի, 5-րդ մասի համաձայն հասկանալ կամ համարժեքը:

** Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան փվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱԱԾ
ք. Երևան, Նալբանդյան 104
ՀՀ Ֆին. Նախ. աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/հ 900011301075
ՀՎՀՀ 01507079

Տնօրենի տեղակալ՝

Ա. Հակոբյան

ՎԱՃԱՌՈՂ

«ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ
ք. Երևան, Շիրակի 1/68
«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/հ 1660005021450100
ՀՎՀՀ 02606482

Տնօրեն՝

Մ. Մացակյան

Հավելված N 2

«21» 07 2021թ. կնքված ծածկագրով պայմանագրի

ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԳՀԱՊՁԲ-21/4-ԴԵՂՈՐԱՅՔ/1

21/301-2021

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Ապրանքի									
	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**							
			Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Ընդամենը
3	33651131/3	Սուլֆամեթօքսազոլ + տրիմեթոպրիմ J01EE01, J01EE02, J01EE05, J01EE07	0	0	105500	105500	105500	105500	105500	105500
4	33611160/3	Մետոկլոպրամիդ A03FA01	0	0	0	2970	2970	2970	5940	5940
11	33621420/3	Ատորվաստատին C10AA05	0	0	22477.5	44955	44955	44955	72827.1	72827.1
16	33631380/4	Տոլպերիզոնի հիդրոքլորիդ M03BX04	0	0	33690	84225	84225	84225	134760	134760
17	33691189/2	Բետահիստին (բետահիստինի դիհիդրոքլորիդ) N07CA01	0	0	46197.69	92395.38	92395.38	92395.38	161700	161700
18	33691190/3	Թիոկտաթթու (ալֆա- լիպոյաթթու) A16AX01, A05BA	0	0	36030	36030	36030	36030	60050	60050
19	33621470/3	Մոքսոնիդին C02AC05	0	0	36862	92155	92155	92155	147448	147448
28	33621100/4	Հեպարին նատրիում B01AB01, C05BA03, S01XA14	0	0	23064	46128	46128	46128	69192	69192
32	33651127/3	Դոքսիցիկլին A01AB22, J01AA02	0	0	3210	3210	3210	3210	3210	3210
33	33621270/3	Մենթոլի լուծույթ մենթիլ իզովալերաթթվում C01EX	0	0	10750	10750	10750	10750	10750	10750
37	33651145/2	Դեքսամեթազոն, նեոմիցին (նեոմիցինի սուլֆատ), պոլիմիքսին B (պոլիմիքսին B-ի սուլֆատ) S01CA01	0	0	10750	10750	10750	10750	21500	21500
39	33691216/5	Էթիլմեթիլհիդրոքսիպիրիդինի սուկցինատ N07XX	0	0	31400	31400	31400	31400	62800	62800
43	33671124/2	Տոբրամիցին, դեքսամեթազոն S01CA01	0	0	18700	18700	18700	18700	18700	18700
44	33671124/1	Տոբրամիցին, դեքսամեթազոն S01CA01	0	0	17871.9	17871.9	17871.9	17871.9	17871.9	17871.9

50	33691213/2	Լիոֆիլացված կենդանի կաթնաթթվային մանրէներ (լակտոբացիլուս ացիդոֆիլուս, բիֆիդոբակտերիում անիմալիս) -A07FA01	0	0	52080	52080	52080	52080	104160	104160
62	33621320/3	Կատվախոտ դեղատու, պատրինջ դեղատու, անանուխ պղպեղային HN05CM	0	0	79520	79520	79520	79520	159040	159040

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱԱԾ
ք. Երևան, Նալբանդյան 104
ՀՀ Ֆին. Նախ. աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/հ 900011301075
ՀՎՀՀ 01507079

Տնօրենի տեղակալ՝

Ա. Հակոբյան

ՎԱՃԱՌՈՂ

«ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ
ք. Երևան, Շիրակի 1/68
«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/հ 1660005021450100
ՀՎՀՀ 02606482

Տնօրեն՝

Մ. Մացակյան

Հավելված N 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն